ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Փոքր Իշխանի 1

№ 4815-Ա «28» նոյեմբերի 2025թ.

ՆՈՐՔԻ ԱՅԳԻՆԵՐ ՓՈՂՈՑԻ Հ.179/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «ԱԼՖԱ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի տնօրեն Հրաչյա Մնացականյանի դիմումը՝ Նորքի այգիներ փողոցի հ.179/1 հասցեում գտնվող հողամասի սահմանները ճշտելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.19072022-01-0168 վկայականը և ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալի կողմից 3/6/2025 տրամադրված դիրքորոշումը (Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի այգիների փողոց հ.179/1 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական պետական համալիր փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ):

Քննարկվող հողամասն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշման հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի՝ գտնվում է Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 5-րդ գոտում:

«ԱՐՓԻՆԵ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՄԱԴՈՅԻ» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագծի ճշգրտումից պարզվել է, որ վերը նշված հասցեում գտնվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է է 2479.2քմ, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.19072022-01-0168 վկայականում ամրագրված՝ 2598.2քմ մակերեսի փոխարեն:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ քննարկվող հողամասը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գոտում է:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության Ն/47411-25, Ն/47869-25,Ն/66563-25 և Ն/69523-25 եզրակացությունները.

1. Սահմանել, որ Նորքի այգիներ փողոցի հ.179/1 հասցեում գտնվող 2479.2քմ մակերեսով հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ